ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 06 >> մարտի 2017թ. N 08

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 6 մայիսի 1997 թվականի ՆՀ-728 հրամանագրի 1.17-րդ կետի <<ա>> ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վարչապետի Արմավիրի մարզ կատարած այցելության ժամանակ բարձրացված հարցերի շրջանակներում տրված հանձնարարականները և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի 2017 թվականի հունվարի 30-ի զեկուցագիրը, մարզում գործող առողջապահական կազմակերպությունների ներկայիս ընթացիկ վիճակի ուսումնասիրության և համապատասխան առաջարկություններ ներկայացնելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ (Հ. Հարությունյան) սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել երկամսյա ժամկետում և արդյունքների մասին ներկայացնել զեկուցագիր Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հանձնաժողովին՝ (Հ. Հարությունյան) սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն անհրաժեշտության դեպքում մասնակից դարձնել համապատասխան մասնագետներին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Լ. Մուրադյանին:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2017 թվականի փետրվարի 06-ի
N 08 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Հարությունյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ.

Անդամներ՝

Յու. Մանվելյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի պետ.

Ա. Հակոբյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ.

Ա. Պողոսյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**